

# «ՔԻՉ ՄԸ ԱՄԵՆ ԲԱՆ». VARIETY SHOW

*Posted on January 10, 2023 by Keghart*



Category: [Opinions](#)



Մ. Գ., ԱՄՆ, 2 Յունուար 2023

**Ականատեսի վկայութիւն.**- 1959-1960 տարեշրջանով սկսաւ ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի հասունացման շրջանս: Տարի մը անցած էր միայն Լիբանանի քաղաքացիակա՞ն թե՞ «եղբայրասպան» կռիւներէն (1957-1958) եւ տակաւին չէին չորցած հարիւրաւոր անմեղ զոհերու հարազատներուն արցունքները, մենք՝ համեստ թաղերու եւ արհեստաւոր ընտանիքներու զաւակներ, կը մտնէինք աշխարհաճանաչողութեան նոր հանգրուան մը: Պատանեկութեան շրջանը թողած ետին՝ կը սկսէր հասունացման նոր շրջան մը: Կեթթոյական միջավայրէ մը դուրս կու գայինք եւ կը յայտնուէինք աւելի լայն աշխարհի մը մէջ: Մեր այս երթին մէջ ցնցող երեւոյթներ ունեցանք, որոնց մէջ անմոռանալի պիտի մնան [«Քիչ մը ամեն բան»](#) կոչուած տարեկան հանդիսութիւնները:

Վայրը մեր վարժարանին կից «Գալուստ Կիւլպէնկեան» հանդիսասրահն էր, կոկիկ 600 նստատեղիով մշակոյթի կեդրոն մը: Եւ ահաւասիկ գարնան օր մը կը ծանուցուէր իր տեսակին մէջ եզակի ձեռնարկ մը, որուն կը մասնակցէին Լիբանանի հայկական երկրորդական բոլոր վարժարանները: Այս կը նշանակէր՝ ՀԲԸՄ-Ռամկավար դպրոցներու աշակերտներուն հետ բեմ պիտի բարձրանային ՀՅԴ-ի «ամրոց» Նշան Փալանճեան ճեմարանը, Մխիթարեաններու վարժարանը, Հայ Աւետարանական Գոլեճը...: Ո՞վ կրնար ըսել թէ ընդամենը տարիուկէս առաջ «հնչակ-դաշնակի» արիւնալի օրեր էինք ունեցեր: Անհաւատալի բան: Մենք առաջին անգամ կը վայելէինք որակաւոր երգիծական ասմունք ու էլէկտրոնիկ կիթառով ու թմբուկով համերգ, սպանական կիթառ, դաշնօն (աքորտէոն) ու դաշնամուր. Ուիլիըմ Սարոյեանի «Իմ սիրտը լեռներն է», Շիրազի «Մարդկանց անունները» երգիծական ոտանաւորը ծափեր կը խլէին աշակերտներէն, նոյնիսկ խստամբեր, ծանր ակնոցներով տնօրէններէն եւ ուսուցիչներէն: Ամիսներով խօսուեցաւ այս մասին: Յաջորդ տարի կրկնուեցաւ, երրորդ եւ չորրորդ տարին՝ նոյնպէս...

Տօնախմբութիւն մըն էր, որ Պէյրութի դպրոցներու աշակերտ-աշակերտուհիները իրարու քով կը բերէր մէկ յարկի տակ, ուր մենք կը մոռնայինք մեր «քաղաքական պատկանելիութիւնները»:

Այնուհետեւ յանկարծ դադրեցաւ: Լսեցինք թէ՛ դադրեցուցին... Մեր քաղաքական ղեկավարներն ու տնօրէնները «ուրիշ հոտեր էին առեր»...: Հակառակ ասոր «Քիչ մը ամեն բան»ի ոգին չմեռաւ, աւելի ճիշդը չկրցան մեռցնել մեր քաղքենի եւ հիւանդագիւտներէն «զգուշաւոր» ղեկավարները: Արդարեւ, եթէ «Քիչ մը ամեն բան»ը «զոհ» գնաց ինչ որ քաղաքական-կուսակցական նախապատուութիւններու, այնուամենայնիւ իրանանահայ ուսանողութեան մէջ ծնունդ առած այս աննախադէպ

շարժումներն ու հակադիր ճակատները եկած ուսանողության դրսևորումները արտայայտուեցան այլ կերպ, ինչպես՝ ուսանողության միջեւ Մեծ Եղեռնի յիսնամեակի յուշահանդեսներու նախապատրաստական աշխատանքներու տեսքով, ապա 1969-ին դարձեալ իր տեսակին մէջ եզակի «Երիտասարդ հայ»ի հրատարակութեամբ: Քանի մը տարի չանցած նկատեցի թէ ՀԱՀԳԲ-ի «հոգեւոր հայրերէն» ոմանք նոյնպէս այս խմորումներէն յառաջացած էին...:

Երբեւիցէ կրնա՞յ կրկնուիլ այսպիսի համա-հայկական կամ համա-ուսանողական շարժում մը, որ հեռու ըլլայ «աւանդական կուսակցութեանց» հսկողութենէն...:

**Լիբանանահայ երբեմնի աշակերտերու արխիւէն**

**Ծրագիր-Կանոնագիր**

**«Քիչ մը ամեն բան» գեղարուեստական հանդէսի**

«Քիչ մը ամեն բան» գեղարուեստական հանդէսը առաջին անգամ տեղի ունեցաւ 1960 Մայիսին՝ նախաձեռնութեամբ Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանի, մասնակցութեամբ՝ Նշան Փալանճեան Ճեմարանի, Հայ Աւետարանական Գոլէճի, Դարուիի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան Երկրորդական Վարժարաններու: Կատարուած ձեռնարկը, որ պսակումն էր Պէյրուքի հայկական երկրորդական վարժարաններու աշակերտութեան հաւաքական աշխատանքին, մասնակցող վարժարաններու տնօրէնութեանց կողմէ արժանացաւ քաջալեր գնահատանքի: 1961-ին եւ 1962-ին նոյն ձեռնարկը կրկնուեցաւ դառնալով մասամբ աւանդութիւն, ստեղծելով լայն եւ ուրախառիթ մթնոլորտ պէյրուքահայ աշակերտութեան համար:

1962-ի «Քիչ մը ամեն բան»ի կազմակերպիչ յանձնախումբը, որ բաղկացած է Նշան Փալանճեան Ճեմարանի, Հայ Աւետարանական Գոլէճի, Դարուիի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան Վարժարաններու ներկայացուցիչներէն, պատրաստած է սոյն կարճ ծրագիր-կանոնագիրը, որպէսզի կանխած ըլլայ այն կարգ մը դժուարութիւնները, որոնց կրնան հանդիպիլ հետագայի կազմակերպիչ յանձնախումբերը:

**ՅՕՂՈՒՄԾ 1.- ԱՆՈՒՆ**

Ձեռնարկը կը կոչուի «Քիչ մը ամեն բան» միջդպրոցական գեղարուեստական հանդէս:

**ՅՕՂՈՒՄԾ 2.- ՆՊԱՏԱԿ**

«Քիչ մը ամեն բան» գեղարուեստական հանդէսին միջոցաւ, մշակութային գետնի վրայ՝ համագործակցութիւն ստեղծել պէյրուքահայ երկրորդական վարժարաններու աշակերտութեանց միջեւ:

**ՅՕՂՈՒՄԾ 3.- ՄԱՍՆԱԿՏՈՒԹԻՒՆ**

Պէյրուքահայ հայկական երկրորդական վարժարանները առանց խտրութեան

կրնան մասնակցիլ սոյն ձեռնարկին: Մասնակցող վարժարաններու  
աշակերտներէն դուրս ոչ ոք կրնայ մասնակցիլ:

#### **ՅՕՂՈՒՄԾ 4.- ՀԱՍՈՅԹ**

ա) Ձեռնարկին յաջողութեան համար իւրաքանչիւր դպրոց կը տրամադրէ պէտք  
եղած գումարին իրեն ինկած բաժինը որպէս դրամագլուխ:

բ) Հանդէսէն զոյացած գումարը կը նկատուի հասոյթ:

գ) Նուիրատուութիւնները կը դասուին հասոյթներու շարքին:

#### **ՅՕՂՈՒՄԾ 5.- ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

ա) Իւրաքանչիւր դպրոց կը ներկայացնէ նուազագոյնը երկու ներկայացուցիչ:

բ) Կազմակերպիչ յանձնախումբը իր առաջին ժողովին ընդհանուր  
քուէարկութեամբ կ'ընտրէ իր դիւանը որ կը բաղկանայ

1) Ատենապետ

2) Քարտուղար

3) Եւ Գանձապահ

գ) Իւրաքանչիւր դպրոց քուէարկութեան ժամանակ կը ներկայացնէ մէկ քուէ:

դ) Յանձնախումբը ամէն շաբաթ կ'ունենայ իր խորհրդակցական ժողովները իր  
յարմար դատած օրերուն:

ե) Յանձնախումբը պատասխանատու է ձեռնարկին պատրաստութեան բոլոր  
աշխատանքներուն:

զ) Իւրաքանչիւր դպրոցի ներկայացուցիչները պէտք է տեղեակ պահեն իրենց  
տնօրէնութիւնը տարուած աշխատանքներու մասին:

#### **ՅՕՂՈՒՄԾ 6.- ԲՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ**

Վիճելի հարցերը քուէարկութեամբ կը լուծուին:

#### **ՅՕՂՈՒՄԾ 7.- ՅԱՅՏԱԳԻՐ ԵՒ ՀԱՆԴԵՍ**

ա) Յայտագիրը պէտք է ունենայ լուրջ եւ առաւելագոյն չափով հայկական բնոյթ:

բ) Հանդէսէն երկու շաբաթ առաջ յայտագիրը վերջնական ձեւի պէտք է բերուի:

գ) Իւրաքանչիւր դպրոց իր առանձին մասնակցութիւնը պէտք է բերէ հանդէսին:

դ) Հանդէսը կը փակուի հաւաքական արտայայտութեամբ մը:

ե) Հանդէսին տեւողութիւնը պէտք չէ անցնի երեք ժամը:

զ) Հանդէսին կարգադիր յանձնախումբը (20 հոգիւնց) կը նշանակուի  
կազմակերպիչ յանձնախումբին կողմէ.

1.- Բեմի պատասխանատու

2.- Դռներու պատասխանատու

3.- Սրահին հսկող պատասխանատու

4.- Լոյսերու ու վարագոյրներու պատասխանատու

Ե) «Հայկական ժամադրութիւն» չընել:

#### **ՅՕՂՈՒՄԾ 8.- ՏՈՄՍԵՐ**

ա) Տոմսերու գինը կ'որոշուի կազմակերպիչ յանձնախումբին կողմէ:

բ) Իւրաքանչիւր դպրոց հաւասար կերպով կը սպառէ տոմսերը:

**ՅՕՂՈՒՄԾ 9.- ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎ**

Կազմակերպիչ յանձնախումբը իր վերջին խորհրդակցական ժողովի ընթացքին, որ տեղի կ'ունենայ հանդեսն Ետք, կը քննէ

ա) հասոյթի պարագան. իր յարմար տեսած լուծումը կը գտնէ:

բ) ընդհանուր հաւաքոյթի մը պարագան. հանդեսին մասնակցող դերակատարներուն եւ կարգադրիչ յանձնախումբին համար:

**ՅՕՂՈՒՄԾ 10.- ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ**

Ներկայ կանոնագիրը կրնայ փոփոխութեան ենթարկուիլ նոր կազմակերպիչ յանձնախումբին կողմէ: Նոր կազմակերպիչ յանձնախումբը պետք է հսկէ սոյն կանոնագրին կէտ առ կէտ գործադրութեան:

**Խմբագրական ծանօթութիւն.- Վերել նշուած «Ծրագիր-Կանոնագիր»ը**

վերահրատարակուած է Պէյրութի [Յառաջ Գրական-հասարարական շաբաթաթերթ](#)էն (Ա. տարի, թիւ 9, 5 Դեկտեմբեր 1965, էջ 3) եւ առցանց առաջին անգամ ըլլալով լոյս կը տեսնէ [Keghart.org](https://keghart.org)-ի մէջ: «Քիչ մը ամեն բան»ի կազմակերպիչ յանձնախումբի

ատենապետութիւնը վարած են հետեւեալները. Վարդան Ուզունեան (1960), [Ժիրայր Դանիէլեան](#) (1961), Տիգրան Աբրահամեան (1962) եւ [Յարութիւն \(Արթօ\) Նազուլեան](#) (1963), որոնք աւագ դասարաններու աշակերտներ ըլլալով, եւ քաղաքական-կրթական հասկնալի պատճառներու բերումով գաղտնաբար կը մասնակցէին յառաջդիմական-ձախակողմեան միջոցառումներու, ինչպէս օրինակ «Գրական Շրջանակ»ի այլեւայլ աշխատանքներուն:

**There are no comments yet.**